



ՇՏԱՊ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱՄԱՐ

2020թ. մարտի 1

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք՝

Հայաստանում՝ Հովհաննես Հարությունյան, 0037493332178, hharutyunyan@ndi.org

Միացյալ Նահանգներում՝ Ջերի Հարթ, jhartz@ndi.org, +1 202 728-5500

**Կանայք և երիտասարդները լինենու են Հայաստանի ժողովրդավարական
հաջողության բանալին**

*Ազգային ժողովրդավարության ինստիտուտի (National Democratic Institute)
հայտարարություն*

Երևան, Հայաստան

«Որպես նոր ժողովրդավար երկիր՝ Հայաստանին սպասվում է երկար ճանապարհ», - նշել է Ազգային ժողովրդավարության ինստիտուտի նախագահ, դեսպան Դերեք Միթչելը երկիր կատարած այցի ավարտին: «Սակայն պարզ է, որ երկիրն արդեն իսկ իր տրամադրության տակ ունի հաջողության համար անհրաժեշտ բաղադրիչների հարուստ բազմազանություն: Դրանց մեջ գլխավորներն են նոր սերնդի առաջնորդների թարմ ժողովրդավարական էներգիան, քաղաքականապես ակտիվ կանանց և երիտասարդների աճող թիվը և ժողովրդավարական միջազգային հանրության աջակցությունը»:

Միթչելը փետրվարի 26-28-ը այցելել է Երևան՝ մասնակցելու Հայաստանում ժողովրդավարության և ԱԺԻ (NDI) ծրագրերի մշակման ուղղությամբ զարգացումների վերաբերյալ խորհրդակցություններին: Որպես ԱԺԻ-ի նախագահ՝ սա Միթչելի առաջին այցն էր Հայաստան:

Եռօրյա այցի ընթացքում Միթչելը հանդիպել է խորհրդարանի անդամների, իշխող և ընդդիմադիր խմբակցությունների քաղաքական կուսակցական ղեկավարների հետ, ինչպես նաև դիվանագիտական համայնքի ներկայացուցիչների հետ:

Միթչելը մասնակցել է ԱԺԻ-ի երկու նոր նախագծերի՝ Հայաստանի Ազգային ժողովի փորձնակների ծրագրի և Կատարինե կանանց քաղաքական առաջնորդության ծրագրի

մեկնարկին: Նա նաև մասնակցել է Ինստիտուտի՝ Երիտասարդ քաղաքական առաջնորդության ռազմավարության ծրագրի ավարտական արարողությանը:

«Ես խորապես տպավորված եմ այն կանանց և երիտասարդ առաջնորդների ոգևորությամբ, հանձնառությամբ և տեսլականով, որոնց հետ հանդիպել եմ», - ասել է Միթչելը: «Ժողովրդավարությունը թերի կլինի այնքան ժամանակ, քանի դեռ նրանց ձայնը հավասարապես ներկայացված չէ ամբողջ քաղաքական համակարգում: Նրանց հմտություններն ու տաղանդները երկրի համար անգնահատելի և դեռևս չօգտագործված ռեսուրսներ են»:

ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության (USAID) և Ժողովրդավարության աջակցության ազգային հիմնադրամի (NED) կողմից վերահաստատված ֆինանսավորմամբ՝ մի քանի տարի հեռավար տարբերակով աշխատելուց հետո ԱԺԻ-ն 2018թ. կարողացել է վերադառնալ Հայաստան: 2018թ. խորհրդարանական ընտրություններից առաջ ԱԺԻ-ն աջակցել է թեկնածուների միջև բանավեճերի և կուսակցական պատկանելություն չունեցող քաղաքացիների կողմից ընտրությունների մոնիտորինգի անցկացման գործընթացներին:

ԱԺԻ-ը ներկայումս համագործակցում է Հայաստանի քաղաքական կուսակցությունների և խորհրդարանական խմբակցությունների հետ՝ քաղաքական ընդհանուր սպեկտրին, կին ղեկավարներին և երիտասարդ ակտիվիստներին առնչվող բնագավառների շուրջ: ԱԺԻ-ը պարբերաբար իրականացնում է հասարակական կարծիքի ուսումնասիրություն՝ գործընկերներին տրամադրելու քաղաքացիների առաջնահերթությունների վերաբերյալ հավաստի տվյալներ՝ քաղաքականության առաջնահերթությունների ձևավորման նպատակով: Իր իրականացրած բոլոր գործողություններով ԱԺԻ-ը արձագանքում է հայ գործընկերների կողմից ներկայացված խնդրանքներին:

«ԱԺԻ- ը ուրախ է Հայաստանում գործընկերության իր նոր ձևաչափերի կապակցությամբ և ակնկալում է, որ առաջիկա տարիների ընթացքում կշարունակի աջակցել Հայաստանի ժողովրդավարությանը», - ասել է Միթչելը:

ԱԺԻ- ի և նրա ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել www.ndi.org:

###